ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Լրամշակված նախագիծ

Կ-696-24.07.2020,10.09.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «գույքի, եկամուտների և շահերի,» բառերը փոխարինել «գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ՇԱՀԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ»:

Հոդված 3. Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականությունը».

2) 1-ին մասում «նրանց տեղակալների,» բառերից հետո լրացնել «համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների,» բառերը, «նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք,» բառերից հետո լրացնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երևան համայնքի ավագանու անդամների,» բառերը, «հարկային, մաքսային ծառայությունների բարձրագույն» բառերից հետո լրացնել «և գլխավոր» բառերը, իսկ «դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք» բառերից հետո լրացնել «, Ազգային Ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք» բառերը.

3) 2-րդ մասում «նրանց տեղակալների,» բառերից հետո լրացնել «համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների,» բառերը, «նրանց

տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք» բառերից հետո լրացնել «, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, Երևան համայնքի ավագանու անդամները» բառերը, իսկ «գույքի, եկամուտների և շահերի» բառերը փոխարինել «գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» բառերով.

4) 3-րդ մասում «գույքի և եկամուտների» բառերը փոխարինել «գույքի, եկամուտների և ծախսերի» բառերով, «հարկային, մաքսային ծառայությունների բարձրագույն» բառերից հետո լրացնել «և գլխավոր » բառերը, իսկ «դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք» բառերից հետո լրացնել «, Ազգային Ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք» բառերը.

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 4.1–ին մասով.

«4.1. Հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականությունները ստանձնելիս ծախսերի հայտարարագիր չեն ներկայացնում:».

6) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագրում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների, իսկ դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում՝ գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ:».

7) 5.1-ին մասում՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում անձինք մեկամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր:» նախադասությունից հետո լրացնել հետևյալ նախադասությունը.

«Հայտարարատու պաշտոնատար անձը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքում պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո 2 տարվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր:».

8) 5.2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.2. Իրավիճակային հայտարարագրի վրա տարածվում են հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնի ստանձնման հայտարարագրի բովանդակության և ներկայացման կարգի համար սույն օրենքով նախատեսված ընդհանուր կանոնները՝

բացառությամբ սույն մասով նախատեսված դեպքերի: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագրում ներառվում են հայտարարագրման ենթակա գործարքին նախորդող տարվա կամ իրավիճակային հայտարարագիր պահանջելու որոշման ընդունմանը նախորդող՝ 2017 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ: Իրավիճակային հայտարարագիրը ենթակա չէ հրապարակման: Իրավիճակային հայտարարագրի ձևը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:».

9) 7-րդ և 8-րդ մասերում «գույքի և եկամուտների» բառերը փոխարինել «գույքի, եկամուտների և ծախսերի» բառերով:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի վերնագրից հանել «և հայտարարագրում փոփոխություն կատարելը» բառերը:

Հոդված 5. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում առաջին նախադասությունից առաջ լրացնել նոր նախադասություն.

«Հայտարարատու պաշտոնատար անձը, նրա ընտանիքի անդամը հանձնված և չհրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը կարող են հայտարարագրում ուղղում անելու միջոցով վերացնել հայտարարագիրը հանձնելուց հետո քառօրյա ժամկետում:»:

Հոդված 6. Օրենքի 40-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝

1) անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը.

2) տրանսպորտի միջոցը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային, երկաթուղային փոխադրամիջոցը: Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սմ-ը, կամ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ-ը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները.

3) բաժնային արժեթղթեր, այլ ներդրումը հավաստող փաստաթղթերը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը), ինչպես նաև պարտքային արժեթղթերը (պարտատոմսը, չեկը, մուրհակը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը, բացառությամբ բանկային վկայագրի).

4) հանձնված, վերադարձված փոխառությունը.

5) բանկային ավանդը.

6) սույն մասի 1-5-րդ կետերում չնշված՝ չորս միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ (դրան համարժեք արտարժույթ) կամ ավելի բարձր արժեք ունեցող ցանկացած գույք (այսուհետ՝ թանկարժեք գույք).

7)դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 1.1-ին և 1.2-րդ մասեր.

«1.1. Հայտարարագրում ներառվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը, ինչպես նաև այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն:

1.2. Սույն օրենքի իմաստով փաստացի տիրապետվող գույք է համարվում հայտարարատուին սեփականության իրավունքով չպատկանող, բայց վերջինիս կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող կամ օգտագործվող (անկախ նշված իրավունքների պետական գրանցումից) անշարժ գույքը, տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի տիրապետմանը հանձնված անշարժ գույքի, տրանսպորտի միջոցի) թանկարժեք գույքը:».

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Գույքը հայտարարագրելիս նշվում են՝

1) անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը, համասեփականատիրոջ բաժինը, նրա անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը.

2) տրանսպորտի միջոցի դեպքում՝ տրանսպորտի տեսակը, մակնիշը, սերիան, թողարկման տարին, նույնականացման համարը, ձեռք բերելու տարին և եղանակը.

3) արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման տեսակը, գինը (արժեքը), արժույթը, ձեռք բերելու տարին, ընկերության անվանումը, բաժնեմասնակցության տոկոսը, ումից է այն ձեռք բերվել՝ նշելով նրա անվանումը կամ անունը, ազգանունը և հայրանունը, հասցեն, նրանց միջև առկա կապի բնույթը.

4) հանձնված, վերադարձված փոխառության դեպքում՝ փոխառության գումարը (չափը), արժույթը, փոխառության հանձնելու տոկոսադրույքը, պարտապանի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն, նրանց միջև առկա կապի բնույթը.

5) բանկային ավանդի դեպքում՝ հաստատության անվանումը, գտնվելու վայրը (եթե Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է), բանկային ավանդի չափը.

6) թանկարժեք գույքի դեպքում՝ գույքի անվանումը, նկարագրությունը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը, գործարքի գինը (արժեքը), արժույթը.

7) դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3.1-ին մաս.

«3.1. Սույն հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերում նշված գույքի դեպքում ներառվում են նաև գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը:».

5) 6-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Տարեկան հայտարարագրում ներառվում են նաև տվյալ տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) ընթացքում հանձնված կամ վերադարձված փոխառության գումարը (չափը) և արժույթը, պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն եթե նույն անձին հանձնված կամ վերադարձված փոխառության հանրագումարը գերազանցում է մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:».

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 6.1-րդ մաս.

«6.1. Բանկային ավանդի դեպքում՝ տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա ավանդի չափը, արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա ավանդի դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը:».

7) 7-րդ մասում «արժույթը» բառից հետո լրացնել «իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը» բառերը:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 40.1-ին հոդվածով.

«**Հոդված 40.1. Ծախսերի հայտարարագրի բովանդակությունը**

1 . Հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված ծախսերը:

2 . Սույն օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով կատարված հետևյալ ծախսերը.

1) հանգստի համար կատարված ճանապարհածախսը (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախսը.

2) շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարը.

3) ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը.

4) գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերը.

5) վարկի մարմանն ուղղված վճարումները.

6) անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը.

7) ցանկացած այլ ծախս, այդ թվում՝ որպես նվիրատվություն տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-6-րդ կետերով սահմանված հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսերը ենթակա են հայտարարագրման, եթե դրանց միանվագ արժեքը գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը կամ նույն տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է երեք միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

4. Ծախսերը հայտարարագրելիս նշվում են.

1) ծախսի տեսակը.

2) կատարված ծախսի բովանդակությունը.

3) ծախսի չափը (գումարը).

4) ծախսի արժույթը:

5.Պաշտոնեական պարտականություններն դադարեցնելու հայտարարագրերում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև

պաշտոնեական պարտականություններն դադարեցնելու օրը կատարած ծախսերը:»:

Հոդված 8. Օրենքի 41-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ստացված փոխառությունները.».

2) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3.1-ին կետով.

«3.1.) ստացված վարկերը (այդ թվում՝ հիփոթեքային).».

3) 4-րդ մասի 4-րդ կետում «տրված փոխառությունների» բառերից հետո լրացնել «կամ բանկային ավանդների»բառերը.

4) 6-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամուտ վճարողի և նրանց միջև առկա կապի բնույթի մասին տեղեկատվություն.».

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին և 6.2-րդ մասեր.

«6.1. Ստացված փոխառությունը հայտարարագրելիս նշվում են նաև տարեկան հայտարարագրի դեպքում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի, պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերում՝ համապատասխանաբար պաշտոնեական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ փոխառության մնացորդի չափը, ինչպես նաև ստացված փոխառության տոկոսադրույքը, նպատակային նշանակությունը:

6.2.Վարկը հայտարարագրելիս նշվում են նաև վարկի նպատակային նշանակությունը, տարեկան հայտարարագրի դեպքում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի, պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերում՝ համապատասխանաբար պաշտոնեական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ վարկի մայր գումարի մնացորդի չափը, իսկ հիփոթեքի դեպքում՝ նաև հիփոթեքի առարկան և դրա գտնվելու վայրը:».

6) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Հայտարարագրման ենթակա չէ հաշվետու ժամանակահատվածում ստացված այն եկամուտը կամ նույն տեսակի եկամտի հանրագումարը, որի արժեքը չի գերազանցում 200 000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան

համարժեք արտարժույթը, բացառությամբ աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների:».

6) 9-րդ մասից հանել «սույն օրենքի իմաստով» բառերը:

Հոդված 9. Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Սույն մասի իմաստով իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձը:»:

Հոդված 10. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասում «հանձնումից հետ անմիջապես» բառերը փոխարինել «հանձնման օրվան հաջորդող հինգերորդ օրը» բառերով:

Հոդված 11.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Հայտարարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք տարեկան հայտարարագրում ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն առաջին անգամ ներկայացնում են 2021 թվականի տարեկան հայտարարագրում՝ 2022 թվականի հունվարի 1-ից: 2021 թվականի հունիսի 1-ից հետո պաշտոնեական պարտականությունները դադարեցրած անձինք պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրում ներկայացնում են նաև ծախսերի վերաբերյալ տեղեկություններ:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համայնքապետարանների աշխատակազմի քարտուղարները, ավագանու անդամները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, Երևան համայնքի ավագանու անդամները մինչև 2021 թվականի մայիսի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագիր:

4. 2020 թվականի հունվարի 1-ից հետո պաշտոնեական պարտականություններն ստանձնած կամ դադարեցրած հարկային, մաքսային ծառայությունների գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող անձինք մինչև 2021 թվականի մայիսի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում համապատասխանաբար պաշտոնեական պարտականությունների ստանձնման կամ դադարեցման հայտարարագիր:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով չսահմանված Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող անձինք մինչև 2021 թվականի մայիսի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում 2019 թվականի տարեկան հայտարարագիր:

6. 2020 թվականի մարտի 1-ի դրությամբ դատավորի պաշտոնավարող օգնականները մինչև 2021 թվականի մայիսի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագիր: 2020 թվականի մարտի 1-ից հետո պաշտոնեական պարտականությունները դադարեցրած և 30 օրվա ընթացքում հայտարարագրման պարտականություն նախատեսող պաշտոնում չնշանակված դատավորի օգնականները մինչև 2021 թվականի մայիսի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում պաշտոնեական պարտականությունների դադարեցման հայտարարագիր:

7. 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում պաշտոնեական պարտականությունները ստանձնած կամ դադարեցրած սույն հոդվածի 2-5-րդ մասերով չնախատեսված և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք մինչև 2021 թվականի մայիսի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում համապատասխանաբար պաշտոնեական պարտականությունների ստանձնման կամ դադարեցման հայտարարագիր:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» , «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Լրամշակված նախագիծ

Կ-696-24.07.2020,10.09.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «գույքի, եկամուտների և շահերի,» բառերը փոխարինել «գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ ~~գլխում~~ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ՇԱՀԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ»:

Հոդված 3. Օրենքի 34-րդ հոդվածում՝

3) Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականությունը».

4) 1-ին մասում «նրանց տեղակալների,» բառերից հետո լրացնել «համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների,» բառերը, «նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք,» բառերից հետո լրացնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երևան համայնքի ավագանու անդամների,» բառերը, «հարկային, մաքսային ծառայությունների բարձրագույն» բառերից հետո լրացնել «և գլխավոր» բառերը, իսկ «դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք» բառերից հետո լրացնել «, Ազգային Ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք» բառերը.

3) 2-րդ մասում «նրանց տեղակալների,» բառերից հետո լրացնել «համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների,» բառերը, «նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք» բառերից հետո լրացնել «, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, Երևան համայնքի ավագանու անդամները» բառերը, իսկ «գույքի, եկամուտների և շահերի» բառերը փոխարինել «գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» բառերով.

4) 3-րդ մասում «գույքի և եկամուտների» բառերը փոխարինել «գույքի, եկամուտների և ծախսերի» բառերով, «հարկային, մաքսային ծառայությունների բարձրագույն» բառերից հետո լրացնել «և գլխավոր » բառերը, իսկ «դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք» բառերից հետո լրացնել «, Ազգային Ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք» բառերը.

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 4.1. -ին մասով.

«4.1. Հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականությունները ստանձնելիս ծախսերի հայտարարագիր չեն ներկայացնում:».

7) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու հայտարարագրում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների, իսկ դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում՝ գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ:».

7) 5.1-~~րդ~~ ին մասում՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում անձինք մեկամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր:» նախադասությունից հետո լրացնել հետևյալ նախադասությունը.

«Հայտարարատու պաշտոնատար անձը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքում պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո 2 տարվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր:».

8) 5.2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.2. Իրավիճակային հայտարարագրի վրա տարածվում են հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնի ստանձնման հայտարարագրի բովանդակության և ներկայացման կարգի համար սույն օրենքով նախատեսված ընդհանուր կանոնները՝ բացառությամբ սույն մասով նախատեսված դեպքերի: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագրում ներառվում են հայտարարագրման ենթակա գործարքին նախորդող տարվա կամ իրավիճակային հայտարարագիր պահանջելու որոշման ընդունմանը նախորդող՝ 2017 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ: Իրավիճակային հայտարարագիրը ենթակա չէ հրապարակման: Իրավիճակային հայտարարագրի ձևը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:».

9) 7-րդ և 8-րդ մասերում «գույքի և եկամուտների» բառերը փոխարինել «գույքի, եկամուտների և ծախսերի» բառերով:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի վերնագրից հանել «և հայտարարագրում փոփոխություն կատարելը» բառերը:

Հոդված 5. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում առաջին նախադասությունից առաջ լրացնել նոր նախադասություն.

«Հայտարարատու պաշտոնատար անձը, նրա ընտանիքի անդամը հանձնված և չհրապարակված հայտարարագրում իրենց հայտնաբերած անհամապատասխանությունը կարող են հայտարարագրում ուղղում անելու միջոցով վերացնել հայտարարագիրը հանձնելուց հետո քառօրյա ժամկետում:»:

Հոդված 6. Օրենքի 40-րդ հոդվածում՝

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝

1) անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը.

2) տրանսպորտի միջոցը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային, երկաթուղային փոխադրամիջոցը: Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սմ-ը, կամ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ-ը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները.

3) բաժնային արժեթղթեր, այլ ներդրումը հավաստող փաստաթղթերը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը), ինչպես նաև պարտքային արժեթղթերը (պարտատոմսը, չեկը, մուրհակը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը, բացառությամբ բանկային վկայագրի).

4) հանձնված, վերադարձված փոխառությունը.

5) բանկային ավանդը.

6) սույն մասի 1-5-րդ կետերում չնշված՝ չորս միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ (դրան համարժեք արտարժույթ) կամ ավելի բարձր արժեք ունեցող ցանկացած գույք (այսուհետ՝ թանկարժեք գույք).

7)դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 1.1-ին և 1.2-րդ մասեր~~ով~~.

«1.1. Հայտարարագրում ~~(բացառությամբ պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրի)~~ ներառվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը, ինչպես նաև այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն:

1.2. Սույն օրենքի իմաստով փաստացի տիրապետվող գույք է համարվում հայտարարատուին սեփականության իրավունքով չպատկանող, բայց վերջինիս կողմից ~~վերահսկվող սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գույքը կամ~~ հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող կամ

օգտագործվող (անկախ նշված իրավունքների պետական գրանցումից) անշարժ գույքը, տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի տիրապետմանը հանձնված անշարժ գույքի, տրանսպորտի միջոցի) թանկարժեք գույքը: ~~Գույքը համարվում է հայտարարատուի կողմից վերահսկվող, եթե ձեռք է բերվել հայտարարատուի օգտին կամ հաշվին կամ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ գույքը փաստացի տնօրինում է հայտարարատուն:~~».

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Գույքը հայտարարագրելիս նշվում են՝

1) անշարժ գույքի դեպքում՝ անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը, համասեփականատիրոջ բաժինը, նրա անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը.

2) տրանսպորտի միջոցի դեպքում՝ տրանսպորտի տեսակը, մակնիշը, սերիան, թողարկման տարին, նույնականացման համարը, ձեռք բերելու տարին և եղանակը.

3) արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման տեսակը, գինը (արժեքը), արժույթը, ձեռք բերելու տարին, ընկերության անվանումը, բաժնեմասնակցության տոկոսը, ումից է այն ձեռք բերվել՝ նշելով նրա անվանումը կամ անունը, ազգանունը և հայրանունը, հասցեն, նրանց միջև առկա կապի բնույթը.

4) հանձնված, վերադարձված փոխառության դեպքում՝ փոխառության գումարը (չափը), արժույթը, փոխառության հանձնելու տոկոսադրույքը, պարտապանի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն, նրանց միջև առկա կապի բնույթը.

5) բանկային ավանդի դեպքում՝ հաստատության անվանումը, գտնվելու վայրը (եթե Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է), բանկային ավանդի չափը.

6) թանկարժեք գույքի դեպքում՝ գույքի անվանումը, նկարագրությունը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը, գործարքի գինը (արժեքը), արժույթը.

7) դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3.1-~~րդ~~ ին մաս~~ով~~.

«3.1. Սույն հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերում նշված գույքի դեպքում ~~Հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքի դեպքում~~ -ներառվում են նաև գույքի սեփականատիրոջ անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը:».

5) 6-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Տարեկան հայտարարագրում ներառվում են նաև տվյալ տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) ընթացքում հանձնված կամ վերադարձված փոխառության գումարը (չափը) և արժույթը, պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն եթե նույն անձին հանձնված կամ վերադարձված փոխառության հանրագումարը գերազանցում է մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:».

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 6.1-րդ մաս~~ով~~.

«6.1. Բանկային ավանդի դեպքում՝ տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա ավանդի չափը, արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա ավանդի դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը~~ (եթե Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է~~:».

7) 7-րդ մասում «արժույթը» բառից հետո լրացնել «իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը» բառերը:~~;~~

Հոդված 7. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 40.1-ին հոդվածով.

«**Հոդված 40.1. Ծախսերի հայտարարագրի բովանդակությունը**

3 . Հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված ծախսերը:

4 . Սույն օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով կատարված հետևյալ ծախսերը.

1) հանգստի համար կատարված ճանապարհածախսը (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախսը.

2) շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարը.

3) ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը.

4) գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերը.

5) վարկի մարմանն ուղղված վճարումները.

6) անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը.

7) ցանկացած այլ ծախս, այդ թվում՝ որպես նվիրատվություն տրված գույք, որի միանվագ արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-6-րդ կետերով սահմանված հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսերը ենթակա են հայտարարագրման, եթե դրանց միանվագ արժեքը գերազանցում է երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը կամ նույն տեսակի ծախսերի հանրագումարը գերազանցում է երեք միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

4. Ծախսերը հայտարարագրելիս նշվում են.

1) ծախսի տեսակը.

2) կատարված ծախսի բովանդակությունը.

3) ծախսի չափը (գումարը).

4) ծախսի արժույթը:

5.Պաշտոնական պարտականություններն դադարեցնելու հայտարարագրերում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականություններն դադարեցնելու օրը կատարած ծախսերը:»:

Հոդված 8. Օրենքի 41-րդ հոդվածում՝

7) 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ստացված փոխառությունները.».

8) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3.1.-ին կետով.

«3.1.) ստացված վարկերը (այդ թվում՝ հիփոթեքային).».

9) 4-րդ մասի 4-րդ կետում «տրված փոխառությունների» բառերից հետո լրացնել «կամ բանկային ավանդների»բառերը.

9-1) 10)6-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, եկամուտ վճարողի և նրանց միջև առկա կապի բնույթի մասին տեղեկատվություն.».

1-0) 11)լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին և 6.2-րդ մասերով.

«6.1. Ստացված փոխառությունը հայտարարագրելիս նշվում են նաև տարեկան հայտարարագրի դեպքում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի,

պաշտոնական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերում՝ համապատասխանաբար պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ փոխառության մնացորդի չափը, ինչպես նաև ստացված փոխառության տոկոսադրույքը, նպատակային նշանակությունը:

6.2.Վարկը հայտարարագրելիս նշվում են նաև վարկի ~~անվանական տոկոսադրույքը,~~ նպատակային նշանակությունը, տարեկան հայտարարագրի դեպքում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի, պաշտոնական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերում՝ համապատասխանաբար պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ վարկի մայր գումարի մնացորդի չափը, իսկ հիփոթեքի դեպքում՝ նաև հիփոթեքի առարկան և դրա գտնվելու վայրը:».

~~1~~ 1) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Հայտարարագրման ենթակա չէ հաշվետու ժամանակահատվածում ստացված այն եկամուտը կամ նույն տեսակի եկամտի հանրագումարը, որի արժեքը չի գերազանցում 200 000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, բացառությամբ աշխատանքի վարձատրության կամ դրան հավասարեցված այլ վճարումների:».

6) 9-րդ մասից հանել «սույն օրենքի իմաստով» բառերը:

Հոդված 9. Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Սույն մասի իմաստով իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության

ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձը:»:

Հոդված 10. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասում «հանձնումից հետ անմիջապես» բառերը փոխարինել «հանձնման օրվան հաջորդող հինգերորդ օրը» բառերով:

Հոդված 11.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. ~~Սույն օրենքի՝ ծախսերի հայտարարագրին վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:~~ Հայտարարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք տարեկան հայտարարագրում ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն առաջին անգամ ներկայացնում են 2021 թվականի տարեկան հայտարարագրում՝ 2022 թվականի հունվարի 1-ից: 2021 թվականի հունիսի 1-ից հետո պաշտոնեական պարտականությունները դադարեցրած անձինք պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրում ներկայացնում են նաև ծախսերի վերաբերյալ տեղեկություններ:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համայնքապետարանների աշխատակազմի քարտուղարները, ավագանու անդամները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, Երևան համայնքի ավագանու անդամները մինչև ~~2020~~ 2021 թվականի մայիսի~~նոյեմբերի~~ ~~1~~31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագիր:

4. 2020 թվականի հունվարի 1-ից հետո պաշտոնեական պարտականություններն ստանձնած կամ դադարեցրած հարկային, մաքսային ծառայությունների գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող անձինք մինչև ~~2020~~ 2021 թվականի ~~նոյեմբերի 1~~մայիսի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում համապատասխանաբար պաշտոնեական պարտականությունների ստանձնման կամ դադարեցման հայտարարագիր:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով չսահմանված Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող անձինք մինչև ~~2020~~ 2021

թվականի մայիսի 31~~նոյեմբերի 1~~-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում 2019 թվականի տարեկան հայտարարագիր:

6. 2020 թվականի մարտի 1-ի դրությամբ դատավորի պաշտոնավարող օգնականները մինչև ~~2020~~ 2021 թվականի ~~նոյեմբերի 1~~մայիսի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագիր: 2020 թվականի մարտի 1-ից հետո պաշտոնեական պարտականությունները դադարեցրած և 30 օրվա ընթացքում հայտարարագրման պարտականություն նախատեսող պաշտոնում չնշանակված դատավորի օգնականները մինչև ~~2020~~ 2021 թվականի ~~նոյեմբերի 1~~մայիսի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում պաշտոնեական պարտականությունների դադարեցման հայտարարագիր:

7. 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում պաշտոնեական պարտականությունները ստանձնած կամ դադարեցրած սույն հոդվածի 2-5-րդ մասերով չնախատեսված և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք մինչև ~~2020~~ 2021 թվականի ~~նոյեմբերի 1~~մայիսի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում համապատասխանաբար պաշտոնեական պարտականությունների ստանձնման կամ դադարեցման հայտարարագիր:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ Կ-696-24.07.2020,10.09.2020-ՊԻ-011/1 ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 6, մաս 2	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 1.1-ին և 1.2-րդ մասերում կատարել հետևյալ փոփոխությունները. 1.1-ին մասից հանել « (բացառությամբ պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրի)» բառերը, իսկ «գույքը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

			ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն» բառերը: 1.2-րդ մասից հանել «վերահսկվող սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գույքը կամ» բառերը, ինչպես նաև «Գույքը համարվում է հայտարարատուի կողմից վերահսկվող, եթե ձեռք է բերվել հայտարարատուի օգտին կամ հաշվին կամ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ գույքը փաստացի տնօրինում է հայտարարատուն:» նախադասությունը:		
2.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 6, մաս 3	Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասի 7-րդ կետում «արժույթը» բառից հետո լրացնել «, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը» բառերը:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
3.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ	Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասով լրացվող 3.1-ին մասում «Հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքի դեպքում» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1.1-ին և 1.2-րդ	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

		կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 6, մաս 4	մասերում նշված գույքի դեպքում» բառերով:		
4.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 6	Լրացնել նոր մաս, որով առաջարկվում է 6-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Տարեկան հայտարարագրում ներառվում են նաև տվյալ տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) ընթացքում հանձնված կամ վերադարձված փոխառության գումարը (չափը) և արժույթը, պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն եթե նույն անձին հանձնված կամ վերադարձված փոխառության հանրագումարը գերազանցում է մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:»: Ըստ այդմ, փոխել 6-րդ հոդվածի մասերի համարակալումը:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
5.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»	Նախագծի 6-րդ հոդվածի 6-րդ մասով լրացվող 6.1-ին մասում «արժույթը» բառից հետո լրացնել իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա ավանդի դեպքում՝	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

		օրենքի նախագիծ, հոդված 6, մաս 6 (նախկին՝ մաս 5)	նաև» բառերը, իսկ «(եթե Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է)» բառերը հանել:		
6.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 6	Հոդվածը լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով. «7-րդ մասում «արժույթը» բառից հետո լրացնել «իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը» բառերը:»:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:
7.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 7	7-րդ հոդվածով լրացվող 40.1-ին հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետում «ցանկացած այլ ծախս» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ որպես նվիրատվություն տրված գույք» բառերը, իսկ «միանվագ արժեքը» բառերից հետո՝ «հաշվետու ժամանակահատվածում» բառերը:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:
8.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ	Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս. «4-րդ մասի 4-րդ կետում «տրված փոխառությունների» բառերից հետո լրացնել «կամ բանկային ավանդների» բառերը.»:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:

		կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 8	Ըստ այդմ, փոխել հոդվածի մասերի համարակալումը:		
9.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 8 , մաս 5 (նախկին՝ մաս 4)	5-րդ մասով լրացվող 6.1-ին մասում «չափը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ստացված փոխառության տոկոսադրույքը, նպատակային նշանակությունը» բառերը, 6.2-րդ մասից հանել «անվանական տոկոսադրույքը,» բառերը, իսկ «հիփոթեքի առարկան» բառերից հետո լրացնել «նաև» բառը:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
10.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ , հոդված 11 (նախկինում՝10)	Անցումային դրույթներով սահմանել Ազգային Ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող անձանց հայտարարագիր ներկայացնելու ժամկետները:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:
11.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ ,	Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասից հանել առաջին նախադասությունը:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

		հոդված 11 (նախկինում՝10), մաս 2			
12.	ՀՀ կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ , հոդված 11	Հոդվածի բոլոր «2020 թվականի նոյեմբերի 1» բառերը փոխարինել «2021 թվականի դեկտեմբերի 31» բառերով:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:
13.	ՀՀ կառավարություն	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1, մաս 1	«Տիրապետումը» բառից հետո լրացնել «ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերելը կամ հայտարարատուի կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալը կամ այդ գույքը տնօրինելը» բառերը:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:
14.	ՀՀ կառավարություն	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»	9-րդ մասում լրացվող նոր նախադասությունն առաջարկվում է շարադրել նոր՝ հետևյալ բովանդակությամբ. «Անձի (թեկնածուի) բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:

		օրենքի նախագիծ, հոդված 2, մաս 5	եզրակացությունը հրապարակման ենթակա չէ և չի տրամադրվում այլ անձանց: Հանձնաժողովը, ինչպես նաև անձին նշանակելու կամ ընտրելու իրավասություն ունեցող մարմինը (անձը) չեն կարող հրապարակել անձի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությամբ իրենց հայտնի դարձած տեղեկությունները: Եթե Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում բացահայտվում են առերևույթ հանցագործության հատկանիշներ, այդ տեղեկությունները չեն ներառվում եզրակացության հիմնական մասում և կցվում են եզրակացությանը՝ որպես հավելված: Հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով եզրակացության հավելվածը (առկայության դեպքում) չի կարող տրամադրվել թեկնածուին:»:		
15.	ՀՀ կառավարություն	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ	Նախագծի 3-րդ հոդվածից հանել 2-րդ մասը:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:

		և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 3			
16.	ՀՀ կառավարություն	«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1, մաս 2	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով նոր խմբագրությամբ շարադրվող 2.1-ին կետում՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերից հետո լրացնել «և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի» բառերը: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2020 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթով այս հոդվածում կատարվել էր համապատասխան փոփոխություն, որը դեռևս ուժի մեջ չի մտել: Միաժամանակ սույն փաթեթով նախատեսված կարգավորումը շատ ավելի լայն է և ընդգրկում է նաև բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության շրջանակներում	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ Է:

			վարկային տեղեկատվություն և վարկային պատմություն ստանալու վերաբերյալ դրույթներ, ուստի նախատեսվում է 2.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ միաժամանակ ներառելով նաև կուսակցությունների վերաբերյալ կարգավորումները:		
17.	ՀՀ կառավարություն	«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր հոդված. Օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վարկային բյուրոյի կողմից վարկային տեղեկատվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրամադրվում է անվճար՝ հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր անձի ներկայացրած հայտարարագրերի թվին կամ բարեվարքության ուսումնասիրության շրջանակներում յուրաքանչյուր թեկնածուի և նրա ընտանիքի անդամների թվին կամ յուրաքանչյուր կուսակցության կողմից ներկայացված տարեկան հաշվետվությունների թվին հավասար թվով հարցումներ ներկայացվելու դեպքում:»: Սույն առաջարկը ևս	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:

			պայմանավորված է նախագծի կարգավորումները 2020 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություն կատարելու մասին» օրենքների դրույթներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:		
18.	ՀՀ կառավարություն	««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում	Նախագծերում կատարել տեխնիկական բնույթի փոփոխություններ:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:

		փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ			
19.	ՀՀ կառավարություն		Նախագծերի փաթեթում առաջարկվում է ներառել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքների նախագծերը: Նախագծերով առաջարկվող փոփոխությունը տեխնիկական բնույթ է կրում, քանի որ հայտարարագիր ներկայացնելու ընդհանուր	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:	ԸՆԴՈՒՆՎԵԼ է:

			պարտականությունը և դրան առնչվող դրույթները սահմանվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով: Ըստ այդմ, առաջարկվում է ներդրվող ծախսերի հայտարարագրի համատեքստում սահմանադրական օրենքներում ևս ներառել ծախսերի հայտարարագրման վերաբերյալ դրույթ:		